# «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքում (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 11. Արտաքին գովազդ

Արտաքին գովազդը, բացառությամբ սույն օրենքի 11.1-րդ հոդվածով սահմանված դեպքերի, գրաֆիկական, տեքստային կամ այլ գովազդային բնույթի տեղեկատվություն է, որը տեղադրվում է շենքերի, շինությունների, ոչ հիմնական շինությունների, փողոցային կահավորանքների մասերի վրա:

Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալիս են՝

Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը, այդ թվում՝ Երևան քաղաքի տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների.

այլ համայնքներում՝ համայնքի ղեկավարը՝ բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների.

միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածներում, միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում՝ բացառությամբ Երևան քաղաքի, Հայաստանի Հանրապետության կողմից լիազորված պետական կառավարման մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգին համապատասխան:

Արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու

պայմանները որոշվում են.

Երևան քաղաքում՝ Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները, այդ թվում՝ Երևան քաղաքի տարածքում գտնվող՝ ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների.

Այլ  համայնքներում՝ տվյալ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ՝ միջպետական և հանրապետական նշանակության  ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների.

միջպետական և հանրապետական նշանակության  ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում գովազդ տեղադրելու թույլտվությունների տրամադրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Արգելվում է գովազդ տեղադրել թանգարաններում, պատմական և ճարտարապետական հուշարձանների ներսում, ինչպես նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերում և նրանց տարածքում:»:

**Հոդված 2.** Օրենքը լրացնել նոր 11.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 11.1 Արտաքին գովազդ չհամարվող տեղեկությունները

Արտաքին գովազդ չեն համարվում.

- շինությունների դրսից երևացող, սակայն ներսում տեղակայված գովազդը, որը պարունակում է տվյալ տնտեսավարող սուբյեկտի կողմից վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ՝
- տնտեսավարողի կողմից իրացվող ապրանքների, ծառայությունների, դրանց անվանման, տեսականու, ապրանքային նշանի, կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկություններ պարունակող՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված չափանիշներին համապատասխանող ցուցանակները, որոնք փակցված են այն շինության վրա, որտեղ իրացվում են տվյալ ապրանքները (ծառայությունները),
- Տրանսպորտային միջոցների վրա այն տնտեսական գործունեություն իրականացնողի անվանման, գտնվելու վայրի (բնակության վայրի) և այլ կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկությունները, որին պատկանում է տվյալ տրանսպորտային միջոցը:
- Տվյալ տնտեսավարողի կողմից ընդունվող վճարահաշվարկային համակարգերի, տվյալ ոլորտի վարկանիշային կազմակերպությունների, նվեր-քարտերի մասին  տեղեկությունները:»:

**Հոդված 3.** Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ**

**ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ** **ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ**